

Գրիգոր Կեսարացի հաւանօրէն 1633ին վերջերը դարձեալ պատրիարք կը բերուի ժողովուրդին խնդրանքով և այս անգամ կը պաշտօնավարէ երկուքուկէս տարի ես, մինչև իր մահը՝ 1636 (Գարնաշնչի, էջ 365. նաև Յակոբ Կ. Կեսարացի և Թորոս Աղբար Ա. էջ 294, և այլն):

ձերը, թէեւ բաւական կը մօտենայ, Մասնաւորապէս զինքն շփոթեցուցած է Կարապետ վրդ. ի պատրիարքութիւնը, որ սովորական ցուցակներ չունին, եւ եթէ ցարդ հրատարակուած չլլար Դարանաղցին՝ անձանօթ պիտի մնար:

Օգտուելով Դարանաղցիէն եւ Աղաւնունիէն (Միաբանք եւ այցելութ, էջ 194) հոս աւելորդ չլլայ ըսել թէ այս Կարապետ վրդ. Կալօենց Մովսէսի էր եւ աշակերտ «երանելի Սիմէոն վարդապետին» Ապարանցիի (✠ 1637) մականուանեալ «պրևեսիկոս» եւ անոր «հանճարեղութիւնն եւ զլիով առատ իմաստասիրութիւնն, զնեղուռ կրթութիւնն՝ թէ զաստուածաշունչ գրոց վարժումն, որ շատն ի բերան առեալ իբր զսաղմոս ի քաղ ունել անմուռաց պահելով, զոր ոչ ոք կարող է այսպէս առնել, եւ զարտաքին հանճարս փրկիստփայլից վարժեալ, մանաւանդ զքերականի արհեստն՝ զամենայն վեց մասունքն եւ զմասնկաց մասունքն վերձանութեան եւ ենթադատութեան եւ զուրն մասանց բանին եւ զտասն առդգանութեանց, զլծորդութեանցն եւ զշաղկապիցն եւ զերկոտասան օտից՝ զամենեսեան զսոսա հանդերձ մեկնութեամբքն եւ լմանցովքն ի բերան առեալ ի մտի ունելով որպէս զսաղմոսն Դաւթի: Եւ զա-